ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ («ՀՀԿ» ՊՈԱԿ)

MINISTRY OF TRANSPORT AND COMMUNICATIONS OF THE REPUBLIC OF ARMENIA
"REPUBLICAN CENTRE OF TELECOMMUNICATIONS"
STATE NON COMMERCIAL ORGANIZATION

0091,ք.Երևան, Թբիլիսյան խճուղի, 29
Հեռ.՝ (37410)28-87-17
Հեռ./ֆաքս՝ (37410) 28-86-83

29, Tbilisian Highway, Yerevan,0091,RA
Tel.: (37410) 28-87-17
Tel/Fax: (37410) 28-86-83

N 55

<<05>> փետրվարի 2015թ.

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հնարավոր մասնակիցների ղեկավարներին
apranq-11-3@shh.gnumner.am

Հարգելի մասնակից՝

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ՝ <<ՀՀԿ>> ՊՈԱԿ/ կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

Սույն հրավերի /ծանուցման/ ծածկագիր է հանդիսանում <<ՇՀԱՊՁԲ-11/3-ՀՀԿ-15/09>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Թբիլիսյան խճ. 29 սենյակ 16 հասցեով, մինչև 2015թ. փետրվարի 17-ը ժամը 11:00-ը: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Արմինե Սահակյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<ՀՀԿ>> ՊՈԱԿ-ի վարչական շենքում, Թբիլիսյան խճ. 29 հասցեով, N 15 սենյակում, 2015թ.-ի փետրվարի 17-ին, ժամը 11:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում <<ՀՀԿ>> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերումը:

<<ՀՀԿ>> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի մատակարարման /որը կազմված է՝ 54 չափաբաժիններից/ տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի /ծանուցման/ N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա/ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում /Հավելված 2/, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ/ գնային առաջարկ /Հավելված 3/: Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3>> ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<ՀՀԿ>> ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝

rct-gnumner.sahakyan@yandex.ru:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և /կամ/ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ /լրացուցիչ/ փաստաթղթեր և /կամ/ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և /կամ/ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և /կամ/ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և Կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով /ծանուցումով/՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան /կոնկրետ/ դրույթին ի կատարումն, որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և /կամ/ տվյալները:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն՝ **Ա.Վերդյան**

Ա. Սահակյան 28-47-87
rct-gnumner.sahakyan@yandex.ru

Հավելված 1
<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ
N <<*ՇՀԱՊՁԲ-11/3-ՀՀԿ-15/09*>>

ք. Երևան <<_____ >>_____2015թ.

«Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Ա.Վերդյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<----------->> -ն, ի դեմս ընկերության տնօրեն ----------ի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր, այսուհետ՝ /Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողը Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը.

բ) Հաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանգիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը:

3.1.5 Ընդունել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանգրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ ---------- (----------) **ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ /պահումներ/ կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող /կանխավճարի մարվող/ գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում/, բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են, սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 30-ը:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության /այսուհետ՝ արձանագրություն/ ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ /Հավելված 4/:

6.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 % -ի չափով:

7.6 Սույն Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն Պայմանագրով և սույն պայմանգրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում, չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել

պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատական կարգով:

9.7 Սույն Պայմանագիրը և հավելվածները կազմված են ____ էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<----------->> ՊՈԱԿ	<<----------->>
ք. Երևան,----------	**ք. Երևան,----------**
<<----------բանկ>>	**<<----------բանկ>>**
Հ/Հ՝ ----------	Հ/Հ՝----------
ՀՎՀՀ՝----------	ՀՎՀՀ՝ ----------
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
<<_____ >>_____2015թ.կնքված
<<ՇՀԱՊՁԲ-11/3-ՀՀԿ-15/09>> ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Ապրանքի անվանումը*	տեխնիկական տվյալները
1.	Գրիչ /1000 հատ/	Գնդիկավոր 0,7 մմ /AH 555-A/ կապույտ
2.	Գրիչ գելային /180 հատ/	Սև թանաքով, GELLIK PEN GP-500 կամ համարժեք
3.	Մատիտ /100 հատ/	Սև գույնի, ռետինով, GLOBE 555 2HB կամ համարժեք
4.	Գծանշիչ /մարկեր/, /10 տուփ/	Տարբեր գույների, ընդգծելու համար
5.	Ռետին /50 հատ/	Գրաֆիտով գրված հետքերը ջնջելու համար
6.	Քանոն /5 հատ/	Պլաստիկ, 30 սմ երկարությամբ
7.	Շտրիխ /25 հատ/	Տարողությունը 20մգ, վրձնով, "RETYPE" կամ համարժեք
8.	Դանակ գրասենյակային մետաղյա, /6 հատ/	Գրասենյակային, սայրի լայնությունը 18 մմ
9.	Սրիչ, սովորական /25 հատ/	Պլաստմասե, մատիտներ սրելու համար
10.	Սոսինձ թղթի /մատիտ/, /30 հատ/	210 գրամ /GLS-21/ կամ համարժեք
11.	Սոսինձ թղթի /տյուբիկով/, /10 հատ/	Թղթի սովորական սոսինձ
12.	Սոսինձ, էմուլսիա /տյուբիկով/, /5 հատ/	Տուփով, 40 գրամ, ПВА-М ունիվերսալ կամ համարժեք
13.	Դակիչ /2 հատ/	Երկանցք, նախատեսված է 10 թերթ դակելու համար
14.	Կարիչ 50-ից ավել թերթի համար, /1 հատ/	Նախատեսված 50-ից ավել թերթ կարելու համար
15.	Կարիչ փոքր մինչև 20 թերթի համար, /10 հատ/	Նախատեսված 20-ից ավել թերթ կարելու համար
16.	Կարիչի մետաղալարե կապեր /50 տուփ/	Նախատեսված է 10 թերթ կարելու համար
17.	Սեղմակ փոքր /35 հատ/	25 մմ չափի, մետաղական, գրասենյակային
18	Սեղմակ միջին /30 հատ/	32 մմ չափի, մետաղական, գրասենյակային

19.	Սեղմակ մեծ /30 հատ/	41 մմ չափի, մետաղական, գրասենյակային
20.	Կոճգամ /6 հատ/	Մետաղյա, գունավոր գլխիկներով, տուփի մեջ 100 հատ
21.	Ամրակներ /100 տուփ/	27 մմ երկարությամբ, տուփի մեջ 100 հատ, "DELTA" կամ համարժեք
22.	Թանաք կնիքի բարձիկի համար /2 հատ/	Կապույտ գույնի, 24 մգ, "KOFA" կամ համարժեք
23.	Թղթապանակ արագակար /ստվարաթղթե/, /300 հատ/	Սպիտակ A-4 ֆորմատի, ստվարաթղթից, արագակարով
24.	Թղթապանակ, պոլիներային թաղանթ /ֆայլ/, /3 000 հատ/	A-4 ֆորմատի, թափանցիկ 50 միկրոն
25.	Թղթապանակ կոշտ կազմով /50 հատ/	A-4 ֆորմատի, լայնությունը 80 մմ, ամուր կազմով, RADO կամ համարժեք
26.	Թղթապանակ /250 հատ/	A-4 ֆորմատի, պոլիէթիլենային, տիտղոսաթերթը թափանցիկ,NOKI կամ համարժեք
27.	Թղթապանակ պոլիէթիլեային թաղանթով՝ 10 ֆայլով, /20 հատ/	A-4 ֆորմատի, պոլիէթիլենային, 10 ֆայլով
28.	Թղթապանակ պոլիէթիլեային թաղանթով՝ 20 ֆայլով /10 հատ/	A-4 ֆորմատի, պոլիէթիլենային, 20 ֆայլով
29.	Թղթապանակ պոլիէթիլեային թաղանթով՝ 40 ֆայլով /30 հատ/	A-4 ֆորմատի, պոլիէթիլենային, 40 ֆայլով
30.	Թղթապանակ պոլիէթիլեային թաղանթով՝ 100 ֆայլով /5 հատ/	A-4 ֆորմատի, պոլիէթիլենային, 100 ֆայլով
31.	Արագակար /պոլիէթիլենային/, /40 հատ/	Պլաստիկ A-4 ֆորմատի /զսպանակներով/
32.	Կազմ /ստվարաթղթե/, /50 հատ/	Ստվարաթղթե A-4 ֆորմատի
33.	Կազմ, լամինացիայի թաղանթ /Ա-4/, /50 հատ/	A-4 ֆորմատի կամ համարժեք
34.	Պլաստիկ զսպանակ կարիչ /50 հատ/	Կազմելու համար, երկարությունը 30 սմ, տարբեր տրամաչափի
35.	Թուղթ նշումների համար /սպիտակ/, /300 հատ/	Սպիտակ, տուփով, յուրաքանչյուրի մեջ 100 թերթ, 60 x 110 չափի
36.	Թուղթ նշումների տրցակով՝ պլաստիկ տուփ /3 հատ/	4 գույնի, 9 x 9 x 9 սմ, PAPERLINE կամ համարժեք
37.	Թուղթ գունավոր /Ա-4/, /5 տուփ/	A-4 ֆորմատի, գունավոր /կանաչ, կապույտ/, տուփով, յուրաքանչյուրի մեջ 500 թերթ, 210 x 291 չափի
38.	Թուղթ Ա-4, /700 տուփ/	A-4 ֆորմատի, սպիտակ, տուփով, յուրաքանչյուրի մեջ 500 թերթ, 210 x 291 չափի
39.	Թուղթ Ա-3, /20 տուփ/	A-3 ֆորմատի, սպիտակ, նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար
40.	Թուղթ, նշումների համար, սոսնձվածքով, /100 հատ/	Նշումների համար, մեկ եզրը սոսնձված, 10 x 10 սմ

41.	Գրասենյակային գիրք /մատյան/, /50 հատ/	Մեկ տողանի, կոշտ կազմով, որակյալ սպիտակ թղթից, 66 թերթ, 205 x 290 չափի
42.	Տետր /50հատ/	Քառակուսի, 48 թերթ, 205 x 143 չափի
43.	Նոթատետր /40 հատ/	Զսպանակով, 20 սմ x 13 սմ
44.	Տետր /մեծ/, /400 հատ/	Քառակուսի, 54 թերթ, 30 սմ x 20 սմ
45.	Տրանսպորտային գիրք /2 հատ/	Դիսպետչերական մատյան՝ ուղեգրերի և վառելիքի շարժը գրանցելու համար
46.	Ներքին և անհատական իրավական ակտերի հաշվառման մատյան /3 հատ/	Տնօրենի կողմից ընդունված ներքին և անհատական իրավական ակտերի հաշվառման մատյան, 100 էջ
47.	Նամակի ծրար /1 000 հատ/	Գունավոր եզրերով, 230 x 100 մմ չափի
48.	Նամակի ծրար (A4), /100 հատ/	Սպիտակ, 320 x230 մմ չափի
49.	Ուղեգիր /1 000 հատ/	Տրանսպորտային միջոցների համար
50.	Սկավառակ /CD-R/, /10 հատ/	Imation 700 MB /80 րոպե/ կամ համարժեք
51.	Սկավառակ /CD-RW/, /10 հատ/	Imation 700 MB կամ համարժեք
52.	Սկավառակ /DVD-R/, /50 հատ/	Verbatim 4,7 GB, DVD-R կամ համարժեք
53.	Սկավառակ / DVD -RW/, /16 հատ/	Verbatim 4,7 GB, DVD-RW կամ համարժեք
54.	Հաշվասարք /3 հատ/	12 նիշով, "CITIEZN" SDG-270 կամ համարժեք

***Ապրանքները պետք է լինեն չօգտագործված:**

ԳՆՈՐԴ

<<----------->> ՊՈԱԿ
ք. Երևան,----------
<<----------բանկ>>
Հ/Հ՝ ----------
ՀՎՀՀ՝----------

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

<<----------->>
ք. Երևան,----------
<<----------բանկ>>
Հ/Հ՝----------
ՀՎՀՀ՝ ----------

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
<<_____ >>_____2015թ.կնքված
<<ՇՀԱՊՁԲ-11/3-ՀՀԿ-15/09>> ծածկագրով
գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/ՀՀ դրամ/

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2015 թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափ. միավ.	Միավորի գինը /ՀՀ դրամ/	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քան.	գինը	քան.	գինը	քան.	գինը	քան.	գինը	քան.	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1.	Գրիչ	հատ		1 000		-	-	-		-	-	1 000	
2.	Գրիչ գելային	հատ		180								180	
3.	Մատիտ	հատ		100								100	
4.	Գծանշիչ /մարկեր/	տուփ		10								10	
5.	Ռետին	հատ		50								50	
6.	Քանոն	հատ		5								5	
7.	Շտրիխ	հատ		25								25	
8.	Դանակ գրասենյակային մետաղյա	հատ		6								6	
9.	Սրիչ, սովորական	հատ		25								25	
10.	Սոսինձ թղթի /մատիտ/	հատ		30								30	
11.	Սոսինձ թղթի /տյուբիկով/	հատ		10								10	
12.	Սոսինձ, էմուլսիա /տյուբիկով/	հատ		5								5	
13.	Դակիչ	հատ		2								2	
14.	Կարիչ 50-ից ավել թերթի համար	հատ		1								1	
15.	Կարիչ փոքր մինչև 20 թերթի համար	հատ		10								10	
16.	Կարիչի մետաղալարե կապեր	տուփ		50								50	
17.	Սեղմակ փոքր	հատ		35								35	
18.	Սեղմակ միջին	հատ		30								30	

19.	Սեղմակ մեծ	հատ		30								30	
20.	Կոճգամ	հատ		6								6	
21.	Ամրակներ	տուփ		100								100	
22.	Թանաք կնիքի բարձիկի համար	հատ		2								2	
23.	Թղթապանակ արագակար /ստվարաթղթե/	հատ		300								300	
24.	Թղթապանակ, պոլիներային թաղանթ /ֆայլ/	հատ		3 000								3 000	
25.	Թղթապանակ կոշտ կազմով	հատ		50								50	
26.	Թղթապանակ	հատ		250								250	
27.	Թղթապանակ /պոլիէթիլեային թաղանթով՝ 10 ֆայլով/	հատ		20								20	
28.	Թղթապանակ /պոլիէթիլեային թաղանթով՝ 20 ֆայլով/	հատ		10								10	
29.	Թղթապանակ /պոլիէթիլեային թաղանթով՝ 40 ֆայլով/	հատ		30								30	
30.	Թղթապանակ /պոլիէթիլեային թաղանթով՝ 100 ֆայլով/	հատ		5								5	
31.	Արագակար /պոլիէթիլենային/	հատ		40								40	
32.	Կազմ /ստվարաթղթե/	հատ		50								50	
33.	Կազմ, լամինացիայի թաղանթ /Ա-4/	հատ		50								50	
34.	Պլաստիկ զսպանակ կարիչ	հատ		50								50	
35.	Թուղթ նշումների համար /սպիտակ/	հատ		300								300	
36.	Թուղթ նշումների տրցակով՝ պլաստիկ տուփով	հատ		3								3	
37.	Թուղթ գունավոր /Ա-4/	տուփ		5								5	
38.	Թուղթ Ա-4	տուփ		700								700	
39.	Թուղթ Ա-3	տուփ		20								20	
40.	Թուղթ, նշումների համար, սոսնձվածքով	հատ		100								100	
41.	Գրասենյակային գիրք /մատյան/	հատ		50								50	

42.	Տետր	հատ		50								50	
43.	Նոթատետր	հատ		40								40	
44.	Տետր /մեծ/	հատ		400								400	
45.	Տրանսպորտային գիրք	հատ		2								2	
46.	Ներքին և անհատական իրավական ակտերի հաշվառման մատյան	հատ		3								3	
47.	Նամակի ծրար	հատ		1 000								1 000	
48.	Նամակի ծրար (A4)	հատ		100								100	
49.	Ուղեգիր	հատ		1 000								1 000	
50.	Սկավառակ /CD-R/	հատ		10								10	
51.	Սկավառակ /CD-RW/	հատ		10								10	
52.	Սկավառակ /DVD-R/	հատ		50								50	
53.	Սկավառակ / DVD -RW/	հատ		16								16	
54.	Հաշվասարք	հատ		3								3	

ԳՆՈՐԴ

<<----------->> ՊՈԱԿ
ք. Երևան,----------
<<----------բանկ>>
Հ/Հ՝ ----------
ՀՎՀՀ՝----------

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

<<----------->>
ք. Երևան,----------
<<----------բանկ>>
Հ/Հ՝----------
ՀՎՀՀ՝ ----------

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
<<_____ >>_____2015թ.կնքված
<<ՇՀԱՊՁԲ-11/3-ՀՀԿ-15/09>> ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/ՀՀ դրամ/

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1-54	Գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր	-	-	11%	46%	46%	46%	89%	89%	89%	100%	100%	100%	100%

ԳՆՈՐԴ

<<---------->> ՊՈԱԿ
ք. Երևան,----------
<<----------բանկ>>
Հ/Հ՝ ----------
ՀՎՀՀ՝----------

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

<<---------->>
ք. Երևան,----------
<<----------բանկ>>
Հ/Հ՝----------
ՀՎՀՀ՝ ----------

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 4
<<_____ >>_____2015 թ.կնքված
<<ՇՀԱՊՁԲ-11/3-ՀՀԿ-15/09>> ծածկագրով
գնման պայմանագրի

ՎԱՃԱՌՈՂ	**ԳՆՈՐԴ**
<<----------->>	<<----------->>
----------	----------
<<----------բանկ>>	<<----------բանկ>>
Հ/Հ՝ ----------	Հ/Հ՝----------
ՀՎՀՀ՝ ----------	ՀՎՀՀ՝ ----------

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N_____
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<_____>> <<_____>> 2015 թ.

Պայմանագրի անվանումը՝ ----------:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<_____>> _____ *2015 թ.*
Պայմանագրի համարը՝ *N <<ՇՀԱՊՁԲ-11/3-ՀՀԿ-15/09>>*

Գնորդն՝ ի դեմս <<ՀՀԿ>> ՊՈԱԿ-ի սպասարկման և մատակարարման վարչության պետ՝ Գ. Միքայելյանի և Մատակարարն՝ ի դեմս <--------- >> -------ի, տնօրեն ----------նը, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարում) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը <<____>> <<____>> 2015 թ-ից <<_____>> <<____ >> 2015 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշները	Մատակարարում ների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստժամանակ ացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
_____	_____
Ազգանուն, Անուն	Ազգանուն, Անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2
<<ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ-11/3>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի
<<ՇՀԱՊՁԲ-11/3-ՀՀԿ-15/09>> ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

_____հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<<Պատվիրատուի անվանումը>>-ի կողմից N *<<ՇՀԱՊՁԲ-11/3-ՀՀԿ-15/09>>* ծածկագրով հայտարարված ընթացակարգի ..... չափաբաժնին (չափաբաժիններին) և
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հավաստում է, որ չունի գերիշխող դիրքի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____ -ի էլեկտրոնայանին փոստի հասցեն է՝ <<Մասնակցի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

էլեկտրոնային փոստի հասցե>>:

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____2015 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 3
<<ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ-11/3>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի
<<ՇՀԱՊՁԲ-11/3-ՀՀԿ-15/09>> ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N *<<ՇՀԱՊՁԲ-11/3-ՀՀԿ-15/09>>* ծածկագրով ընթացակարգի հրավերը /ծանուցումը/, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,

_____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

համաձայն հետևյալ գների.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Գնման առարկայի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Գրիչ /1000 հատ/			
2	Գրիչ գելային /180 հատ/			
3	Մատիտ /100 հատ/			
4	Գծանշիչ /մարկեր/, /10 տուփ/			
5	Ռետին /50 հատ/			
6	Քանոն /5 հատ/			
7	Շտրիխ /25 հատ/			
8	Դանակ գրասենյակային մետաղյա, /6 հատ/			
9	Սրիչ, սովորական /25 հատ/			
10	Սոսինձ թղթի /մատիտ/, /30 հատ/			
11	Սոսինձ թղթի /տյուբիկով/, /10 հատ/			
12	Սոսինձ, էմուլսիա /տյուբիկով/, /5 հատ/			
13	Դակիչ /2 հատ/			
14	Կարիչ 50-ից ավել թերթի			

	համար, /1 հատ/			
15	Կարիչ փոքր մինչև 20 թերթի համար, /10 հատ/			
16	Կարիչի մետաղալարե կապեր /50 տուփ/			
17	Սեղմակ փոքր /35 հատ/			
18	Սեղմակ միջին /30 հատ/			
19	Սեղմակ մեծ /30 հատ/			
20	Կոճգամ /6 հատ/			
21	Ամրակներ /100 տուփ/			
22	Թանաք կնիքի բարձիկի համար /2 հատ/			
23	Թղթապանակ արագակար /ստվարաթղթե/, /300 հատ/			
24	Թղթապանակ, պոլիներային թաղանթ /ֆայլ/, /3 000 հատ/			
25	Թղթապանակ կոշտ կազմով /50 հատ/			
26	Թղթապանակ /250 հատ/			
27	Թղթապանակ պոլիէթիլեային թաղանթով՝ 10 ֆայլով, /20 հատ/			
28	Թղթապանակ պոլիէթիլեային թաղանթով՝ 20 ֆայլով /10 հատ/			
29	Թղթապանակ պոլիէթիլեային թաղանթով՝ 40 ֆայլով /30 հատ/			
30	Թղթապանակ պոլիէթիլեային թաղանթով՝ 100 ֆայլով /5 հատ/			
31	Արագակար /պոլիէթիլենային/, /40 հատ/			
32	Կազմ /ստվարաթղթե/, /50 հատ/			
33	Կազմ, լամինացիայի թաղանթ /Ա-4/, /50 հատ/			
34	Պլաստիկ զսպանակ կարիչ /50 հատ/			
35	Թուղթ նշումների համար /սպիտակ/, /300 հատ/			
36	Թուղթ նշումների տրցակով՝ պլաստիկ տուփ /3 հատ/			
37	Թուղթ գունավոր /Ա-4/, /5 տուփ/			
38	Թուղթ Ա-4, /700 տուփ/			
39	Թուղթ Ա-3, /20 տուփ/			
40	Թուղթ, նշումների համար, սոսնձվածքով, /100 հատ/			
41	Գրասենյակային գիրք /մատյան/, /50 հատ/			
42	Տետր /50հատ/			
43	Նոթատետր /40 հատ/			
44	Տետր /մեծ/, /400 հատ/			
45	Տրանսպորտային գիրք /2 հատ/			
46	Ներքին և անհատական իրավական ակտերի հաշվառման մատյան /3 հատ/			
47	Նամակի ծրար /1 000 հատ/			
48	Նամակի ծրար (A4), /100 հատ/			
49	Ուղեգիր /1 000 հատ/			
50	Սկավառակ /CD-R/, /10 հատ/			

51	Սկավառակ /CD-RW/, /10 հատ/			
52	Սկավառակ /DVD-R/, /50 հատ/			
53	Սկավառակ / DVD -RW/, /16 հատ/			
54	Հաշվասարք /3 հատ/			

3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:

****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

_____ _____

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____2015 թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 4
<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N ----------

ք. Երևան <<_____>> _____2015 թ.

<<Մասնակցի անվանումը>>, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ընկերության տնօրենի անուն ազգանունը>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. *Համաձայնության առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է <<Պատվիրատուի անվանումը>> (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ <<Գնման առարկայի անվանումը>> ձեռքբերման *<<ՇՀԱՊՁԲ-11/3-ՀՀԿ-15/09>>* ծածկագրով ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում և ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորություններ պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված <<Գնման առարկայի անվանումը>> ձեռքբերման N *<<ՇՀԱՊՁԲ-11/3-ՀՀԿ-15/09>>* գնման պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ----------թվերով---------- (----------տառերով----------) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <<Մասնակցի բանկի անվանումը>> կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով <<Մասնակցի անվանումը>>, հանձնարարում է <<Մասնակցի բանկի անվանումը>>-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում <<Պատվիրատուի անվանումը>> առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. *Այլ պայմաններ*

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 2015 թվականի դեկտեմբերի 30 -ը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները<<Մասնակցի անվանումը>>

<<Մասնակցի հասցեն>>

<<Մասնակցի բանկի անվանումը>>

<//>

<ԿՀՀ>

տնօրեն՝ ----------
(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ ----------
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 5
<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3 >> ծածկագրով
ընթացակարգի հրավերի

ԵՐԱՇԽԻՔ

ք. Երևան <<_____>> _____ 2015 թ.

Ընդունելով ի գիտություն, որ ..... /այսուհետ՝ Բենեֆիցիար, ի դեմս ՀՀ Ֆինանսների Նախարարությանը/ և _____-ի /այսուհետ՝ Պրինցիպալ/ միջև _____ N _____ գնման պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/ կնքելու համար Պրինցիպալը պարտավոր է ներկայացնել կանխավճարի ապահովում _____ ՀՀ դրամ գումարի չափով /այսուհետ՝ երաշխիքային գումար/, _____ /այսուհետ՝ Երաշխավոր/ ստանձնում է անվերապահ պարտավորություն հանդես գալ որպես Պրինցիպալի ու նրա իրավահաջորդների /ժառանգների/ Երաշխավոր և Պրինցիպալի ու նրա իրավահաջորդների /ժառանգների/ հետ համապարտ պարտապան, ի ապահովումն Պրինցիպալի կողմից Պայմանագրով ստանձնվելիք պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարման:

Պրինցիպալի կողմից Պայմանագրով ստանձնվելիք պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, Պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու դեպքում Երաշխավորը պարտավորվում է անհապաղ վճարել Բենեֆիցիարին պահանջված գումարը, ինչպես նաև իրավունք է վերապահում Բենեֆիցիարի, առանց Երաշխավորին նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով վճարման պահանջագրով գանձել համապատասխան գումար, երաշխիքային գումարի սահմաններում, Երաշխավորի ՀՀ Կենտրոնական բանկում կամ Երաշխավորի ցանկացած թղթակից բանկում բացված՝ Երաշխավորի ցանկացած այլ հաշվից:

Սույնով Երաշխավորը հանձնարարում է ՀՀ Կենտրոնական բանկին, իր բոլոր թղթակից, ինչպես նաև սպասարկող բանկերին պայմանագրի ամբողջ ժամկետի ընթացքում Բենեֆիցիարի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով Երաշխավորի թղթակցային և/կամ/ այլ հաշիվներից անվիճելի կարգով գանձել պահանջվող գումարը:

Սույն երաշխիքը տրվում է մեկ օրինակից, և չի կարող հետ կանչվել կամ վաղաժամկետ դադարեցվել Երաշխավորի կողմից:

Սույն երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև _____:

Բանկի վարչության նախագահ՝ _____ Կ.Տ.
Գլխավոր հաշվապահ՝ _____